

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Գիտության և խորհրդատվության վարչության գլխավոր մասնագետներ
(30-2.3-161, 30-2.3-177, 30-2.3-179)

Գլխավոր մասնագետը՝

1) իրականացնում է գիտության և գյուղատնտեսական խորհրդատվական աշխատանքները.

2) իրականացնում է խորհրդատվական համակարգի տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքները.

3) իրականացնում է այցելություններ գիտության և խորհրդատվության վարչության մարզային ստորաբաժանումներ, վարչության աշխատակիցներին գյուղատնտեսությունում առկա նորարարական մեթոդներին ծանոթացնելու ինչպես նաև այլ թեմաներով վերապատրաստելու համար.

4) իրականացնում է այցելություններ համայնքներ՝ հավաքագրված տվյալների որակի ստուգման համար.

5) իրականացնում է խնդիրների բացահայտման և դրանց ներկայացման ուղղությամբ կատարվող խորհրդատվական աշխատանքները.

6) իրականացնում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն մասնագիտությունների գծով, կամ շրջակա միջավայրի գիտություններ, կամ բնապահպանություն և բնօգտագործում կամ տնտեսագիտություն կամ կամ ընդհանուր մանկավարժություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

2) ՀՀ Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Օրգանական գյուղատնտեսության մասին», «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 742-Լ որոշման և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձը՝ 212,309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար քաղաքացիները կարող են դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գործունեության մասին վկայող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացիներ փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 14.05.2019թ.